ԳՈՀԱՐ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

# ՔԱՆԻ ՈՒՇ ՉԷ, ԱՍԵՄ

(ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ)

ԵՐԵՎԱՆ

ԱՐՄԱՎ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

2018

ՀՏԴ 821.19-1 Եղիազարյան
ԳՄԴ 84 (5Հ)-5
Ե 381

*Խմբագիր՝ Ռոզա Հովհաննիսյան*

Եղիազարյան Գոհար
Ե 381 Քանի ուշ չէ, ասեմ: Բանաստեղծություններ / Գ. Եղիազարյան. - Եր.: Արմավ, 2018. - 176 էջ:

Գրքի տարբեր բաժիններում հեղինակն ստեղծել է քնարական մի աշխարհ, որի զգացմունքային հիմնահանգույցը մայր-զավակ հարաբերությունն է: Գեղարվեստական զույգ ընդհանրացումներով բանաստեղծուհին գտել է ինքնարտահայտման տարաբնույթ միջոցներ: Բոլոր խոհերն ու մտորումները մոր, ընտանիքի, ծնող-զավակ բանաստեղծական ընկալումների արտահայտություններ են:

ՀՏԴ 821.19-1 Եղիազարյան
ԳՄԴ 84(5Հ)-5

ISBN 978-9939-78-015-3

*© Եղիազարյան Գոհար, 2018*
*© «Արմավ», 2018*

# ԱՆԾՓՈԹԵԼԻ ՄԱՅՐԵՐԳՈՒԹՅՈՒՆ

Գոհար Եղիազարյան բանաստեղծուհուն ծանոթացել եմ բոլորովին վերջերս ֆեյսբուքում: Առաջին իսկ բանաստեղծության ընթերցումից հետո աննախադեպ հաճելի զգացողություն ունեցա: Իմ առջև հառնեց նոր ու թարմ ստեղծագործական ունակություններով օժտված մի անհատականություն: Ասեմ, որ ժամանակակից հայ գրականության նկատմամբ իներտ վերաբերմունք եմ ունեցել և հաճելիորեն զարմացա՝ իմ առջև տեսնելով գրելու նոր և անուրանալի ձիրք:

Գոհար Եղիազարյանն ուրույն բանաստեղծական աշխարհ է ստեղծել, որտեղ գերակայում են անկեղծությունն ու անմիջականությունը, և որտեղ բացակայում են սեթևեթանքն ու շինծու զգացումները: Նա հմտորեն գրավում է ընթերցողի սիրտն իր զգացմունքների խորությամբ և տող առ տող առաջնորդում նրան դեպի իր հույզերի խորհրդավոր աշխարհը: Իսկ այդ աշխարհը շնչում է մեր դասական մեծահարուստ գրականության խորունկ իմացությամբ, բանաստեղծական և լեզվարտահայտչական միջոցների առատությամբ: Կարդում ես ու զարմանում՝ ինչպե՞ս է կարողանում տիրապետել այդքան պատկերավոր երևակայության, օգտագործել հարուստ ու ճոխ բառամթերք (նաև՝ նորաբանություններ), ստեղծել բանաստեղծական վառ ու շքեղ պատկերներ՝ համեմված տաղաչափական բազում հնարներով, որոնք անդառնալիորեն դրոշմվում են ընթերցողի հիշողության մեջ:

Բանաստեղծուհու ստեղծագործության հիմնական թեման մայրերգությունն է՝ առանձնահատուկ միայն իրեն: Մայրը նրա հոգու, մտքի, զգացմունքների իշխող էակն է՝ գեղեցիկ, վեհ ու ան-

վերծանելի, սիրասփյուռ, անսահմանորեն նվիրված, զուսպ ու անձնուրացորեն ներողամիտ։ Մայրը ընտանիքի, հասարակության, հայրենիքի հիմնասյունն է։ Այս առումով հեղինակի դիտողականությունը սահմաններ չի ճանաչում. մայրը նրա գրչի տակ ներկայացվում է ոչ միայն զավակի կողմից սիրված ու հարգված լուսաշող մի էակ, այլև իր մարդկային էության ամենախոր ու ամենանրբին դրսևորումներով՝ իբրև անկրկնելիորեն ինքնատիպ ու քնքշաշրշյուն անձնավորություն՝ նման արփիազօծ այգաբացի...

Գիրքը շքեղ նվեր է մոր՝ տիկին Արփենիկի ծննդյան 90-ամյակին։ Այն թանկ նվեր է առհասարակ բոլոր հայ մայրերին, ընթերցողին և հայ գրականությանը։

*Բանասեր, վաստակավոր մանկավարժ՝*
*Նորա Սահակյան*

# ՈՐԴՈՒՍ

Ես համբուրում էի փոքրի՛կ տոտիկներդ,
Մատիկներդ մեկ-մեկ լուռ գուրգուրում էի,
Լալիս, երբ քեզ հանկարծ տեղ էր ցավում, որդի՛ս,
Քո ծիծաղով սիրտն իմ ես զարդարում էի,
Փորձում պատասխանել հազար ու մի հարցիդ,
Մեկ կռահում էի, թե ու՞ր ես թաքնվել,
Մեկ էլ դիտմամբ ասում.
-Ու՞ր է, չկա, չկա՜...
Որ տեսնեմ աչքերիդ աստղիկները չքնաղ,
Մեր խաղ-պահմտոցին ձանձրալի չթվա...
Եվ օրերի երթում ցնդեց մանկությունդ,
Արագ, ինչպես օդում ծիածանն է ցնդում,
Եվ օրերի երթում եղան օրեր, երբ ես
Էլ առաջվա նման քեզ չէի՛ համբուրում,
Սիրում էի սակայն է՛լ ավելի ուժգին,
Ուզում էի ասել՝ մեծ ես, ի՛մ վարուժան...
Այսօր ձերմակ մետաքս թելեր կան քունքերիդ,
Եվ փարվել եմ ուզում քեզ առաջվա նման,
Ու մեկ-մեկ համբուրել այդ ձերմակը, հոգի՛ս...
Սխալվել եմ հաճախ, չեմ զղջում ես սակայն,
Ոչի՛նչ, ոչ մի բան էլ ինձ այնքան չի հուզում,
Որքան համբույրներն այն, որ մնացի քեզ պարտք...
Ու ափսոսո՜ւմ եմ շատ, զղջում եմ ու ... զղջո՜ւմ
Եվ հազար համբույր էլ թե բաշխեմ քեզ հիմա
Չտվածիս տեղը երբեք չի լրանա...
Գիտե՞ս, հավատում եմ գոյությանը հոգու,
Հավատում, որ հոգին հենց այնպես չի ցնդում,
Եվ թե մի օր պիտի սահքով ելնի երկինք,
Կուզեի՝ մանրիկ խալ դառնար քո աչքերում՝
Որպես հավերժ համբույր, որպես գորով գողտրիկ...

*22.09.2018*

•••

Ես Մարիամ չեմ, չէ՛, բայց դու ինձ համար
Հիսուս ես, որդի՛ս,
Քեզ հետ կքայլեմ ծովի վրայով ու չեմ վախենա,
Թե հորձանուտը ինձ իր մեջ առնի,
Ալիքին կասես՝ կանգ առ, ու ծովը խուսքդ կլսի,
Անապատի մեջ կգտնես զուլալ, քչքչան աղբյուր՝
Պապակ շուրթերս թրջելու համար,
Ու թե պետք լինի անցնել իր ափը քանդող խենթ գետը,
Որ անկամուրջ է,
Կասես՝ աչքերդ փակիր, խնդրում եմ,
Ու պղնձաջիլ բազուկներիդ մեջ առած կտանես՝
Պոկելով չքնաղ կոկոն լոտոսը,
Որ բույրն իմ ծոցում թողնելով բացվի,
Թե Հարդագողի ուղին երազեմ,
Դու ինձ կտանես ճամփեքով անհայտ՝
Աստղափշուրներ փռած ոտքիս տակ,
Ձեռքդ կդնես տրոփող սրտիս, թե հանկարծ ցավի,
Ու կշույալես, ու կշույալես ճաք տված հոգիս,
Որ չարնի՛, չարնի...
Բոլոր մեղքերս դու լվացել ես աչքերիդ ծովից
Առաջին անգամ կաթող արցունքով,
Ճիչով առաջին,
Թողություն տվել մի հատիկ բառով,
Որ չի հնանում՝ թանկն է ամենա,
Ես կգամ քեզ հետ, ուր էլ որ տանես,
Ու մանկան նման կբռնեմ ձեռքդ,
Ինչպես դու էիր փոքրիկ թաթիկով մատներս բռնում,
Ես կգամ քեզ հետ ու չեմ հարցնի՝
Ու՞ր ես ինձ տանում...
Եվ այս ամենի համար քեզ ի՞նչ տամ,
Սիրտն ի՞նչ է, եթե ասեմ՝ քո՛նն է, ա՛ռ,

Կյանքն ի՞նչ է, չէ՞ որ լոկ մի՛ կյանք ունեմ,
Քեզ հարյուրն էլ տամ ու մատաղ անեմ,
Հազա՛րն էլ քիչ է...
Ես Մարիամ չեմ, չէ՛, բայց ամեն անգամ
Հիսուսի նման,
Փրկամակույկ ես նետում ինձ թաքուն
Կամ փրկապարան,
Երբ ծովն իմ կյանքի շատ է փոթորկվում,
Ու ժպտո՛ւմ ես լուռ, Հիսուսի նման...

*23.09.2018*

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

*ՆԱԽԱԲԱՆ (Նորա Սահակյան) . . . . . . . . . . . . . . . . . . . 3*

## Ի ՍԿԶԲԱՆԵ

Ի ՍԿԶԲԱՆԵ . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 6
Ես ինչպե՞ս պատմեմ քո մասին, մայրի՛կ . . . . . . . . . . . . . . . . 8
Մանկության պես բարի . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 9
Մայրս ասաց մի օր . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 10
Որդուս սնարի մոտ նանի էիր ասում . . . . . . . . . . . . . . . . . . 11
Փակ են աչքերս... . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 12
Մեղմ հովերից բացի փոթորիկ կա քո մեջ . . . . . . . . . . . . . . 13
Անձար եմ այնքան ու ոչինչ ունեմ քեզ նվիրելու . . . . . . . . . 14
Գիշեր է լուսնյակ... . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 15
Անքուն գիշերվա խոր լռության մեջ, անհուն կապույտում . . . . . . . . . . 16
Պատրանք չէ, ոչ էլ խելագարվել եմ . . . . . . . . . . . . . . . . . 17
Ես մոռացել եմ ինձ և ուզում եմ հիշել . . . . . . . . . . . . . . . 18
Իրիկնաժամ է ու շամանդաղ... . . . . . . . . . . . . . . . . . . . . 19
Մի հրաշքով կրկին մանկանայի . . . . . . . . . . . . . . . . . . . . 20
Գիտեմ՝ գալու եմ ու գրելու եմ կարոտը սրտիդ . . . . . . . . . . 21
Դրսում բարակ անձրև, կաթ–կաթ սիրտս թակող . . . . . . . . . . 22
Կեսն է գիշերվա . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 23
Եվ ամեն անգամ, երբ ես ծնկում եմ . . . . . . . . . . . . . . . . . 24
Երազ տեսա՝ մայրի՛կ . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 25
Կեսն է մութ գիշերվա . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 26
Քո սրտի զարկը քամին բերեց ինձ . . . . . . . . . . . . . . . . . . 27
Մի ամբողջ անցած կյանք . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 28
Աչքիդ մեջ փուշ կա, ցավ կա ու երա՜զ . . . . . . . . . . . . . . . . 29
Կիսալուսնի դիրքով պառկած երազեի . . . . . . . . . . . . . . . . 30
Վաղը գալու եմ, բայց մինչև վաղը . . . . . . . . . . . . . . . . . . 31
Թեև մեծ եմ արդեն ու կյանքում իմ թափառ . . . . . . . . . . . . 32
Ես նկարում եմ քո դիմագծերը՝ վաղո՜ւց . . . . . . . . . . . . . . 33
Ոչ մի բառ, ոչինչ ես դեռ չեմ գրել . . . . . . . . . . . . . . . . . . 34
Հիմա ես ամեն օր մի քիչ փոքրանում եմ . . . . . . . . . . . . . . 35

Կրկնվող ու իրար նման երազներ շատ կան կյանքում . . . . . . . . . . . . 36
Ու՞ր ես թևում, կռո՛ւնկ . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 37
Հաճախ ինձ թվում է . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 38
Անքնություն: Հուշեր: Ու մի փոքրիկ պատում . . . . . . . . . . . . . . . . 40
Թրթի՞ռ ասեմ, տրո՞փ, սե՞ր, արյան կա՞նչ . . . . . . . . . . . . . . . . . . . . 41
Զմրուխտ է կարոտիս լիճը, մամռած են ափերը նրա . . . . . . . . . . . . . . 42
Լուսամարմին, լուսահեղեղ . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 44
Ես էի ու դու, էլի գարուն էր . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 45
Ավելի քան բարև, սիրասո՛ւնս . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 46
Մալախիտե մասնատուփ է ու բացելիս երգում է միշտ . . . . . . . . . . . 48
Երկինքն ամպամած էր սրտիդ նման . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 49
Ես չգտա բառն այն, որ պիտի փարատեր . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 50
Չթարթես, աչքերդ չթարթե՛ս . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 51
–Ալո, բարև, մայրի՛կ . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 52
Դու ինձ պատմել ես եղեգնյա գրչի . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 54
Հանկարծ որոշեցի՝ էլ չեմ գրելու . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 56
Իրարից թաքուն գրում ենք իրար . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 58
Գիշերվա մութը հալածում է ինձ . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 60
Չէ՛, դու չես կարող այդպես հեռանալ . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 61
Եթե բառերը դարմանել գիտեն . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 62
Բոլոր սերերի մեջ վեհնամենա . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 64
Ինձ հովերն են ձոձել կապույտ երազների . . . . . . . . . . . . . . . . . . . . . 65
Ե՛լ, հարազա՛տս, վե՛ր կաց ու քայլի՛ր . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 66
Հեռվից խոսի՛ր ինձ հետ, ես կլսեմ . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 68
Ամեն բացվող օր ես ինձ քո մասին . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 69
Քո ապրած կյանքը սիրո վիպական գիրք է չգրված . . . . . . . . . . . . . . . 70
Երազիս մեջ լռում էիր . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 71
Ինձ քեզ մոտ բերող մի ճանապարհ կա . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 72
Քո աչքերի ծովում՝ երկինք գիշերային . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . .73
Ես համբուրում էի գոց աչքերդ, ծամդ . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . .74
Հիշու՞մ ես, մայրի՛կ, էն ե՞րբ էր . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . .76
Չգիտեմ՝ ե՞րբ է գալու օրն անհայտ . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . .78
Ծաղկի խանութում . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . .80
Ննջում ես, մայրի՛կ . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . .81

Նստի՛ր ինձ հետ, մայրի՛կ . . . 82
Ինձ չփնտրես, մայրի՛կ, ես քո սրտի մեջ եմ . . . 83
Կռո՛ւնկ, թևիդ մատաղ, ինձ էս ի՛նչ ես բերել . . . 84
Մոտեցել է արդեն կարապի չուն . . . 86
Բոլդինյան աշուն էր՝ արև, խշշան ոսկի . . . 87
Բոլոր օրերը նման են իրար . . . 88
Բյուրավոր նամակներ, որոնք չեմ ծրարել . . . 90
Գիշերային քարանձավս զարդարված է . . . 92
Հազրեվարդ շուրթերով մի օր ասացիր ինձ . . . 94
Դու շատ էիր սիրում ձմռան գիշերներում . . . 95
Երազիս մեջ եկել էիր, եկել անակնկալ . . . 96
Պատահում է՝ երազները բաց աչքով ենք տեսնում . . . 97
Աշնան առաջին օրը թարթում է թարթիչները թաց . . . 98
Առնեմ աչքերիդ բարությունը ծով . . . 99
ՋՈՒՐԴԱՐԿՎԱԾ ՆԱՄԱԿ . . . 100
Լույս ես ճառագում, և ժպիտիդ մեջ եդեմական վարդ . . . 102
Քո ձեռքով կարված մի պուրպուր պարկ էր՝ թավշյա ու փոքրիկ . . . 104
Ձյուն էր, տաք ձյուն էր, տաք մանկություն էր, երանություն . . . 105
Ծարավ էի, ծարա՛վ, վեր ելա, որ սիրո մի կաթնաղբյուր գտնեմ . . . 106
Հիշու՞մ ես, մայրի՛կ, ես էի ու դու, բեհեզ աշուն էր . . . 108
«ՍԻՐՈ ԻՄ ՄԵԾ ԼԵԴԻ» . . . 109
Մի փոքրիկ մատուռ . . . 110
Երգս իմ տաք սիրտն է՝ ինձնից հեռու թռած . . . 112
Եթե հնար լիներ հետ տալ ժամանակը . . . 114
Արցունքի շիթերը չեն հոսում, չեն հոսում . . . 115
Հյուսի՛ր, մայրի՛կ, հյուսի՛ր . . . 116
Քի՛չ էլ սպասիր . . . 118
Օդում բուրմունք կար անեղծանելի . . . 120
Անուշ երազիդ մեջ գրկել էիր մորդ . . . 121
Տո՛ւր դալկանույշ ձեռքդ՝ դնեմ մորմոք սրտիս . . . 122
Լիներ առաջվա պես . . . 123
Ճամփաներ են կրկին, մշուշոտ ճամփաներ . . . 124
Թռչնահանդես էր մի հյուսած գորգի վրա . . . 125
Ինձ թվում էր՝ ծառ ես . . . 126

Այն երեկո լռում էին զգայապիրկ մատները քո . . . 128
Փխրուն ուսերից լեռնացած կարոտ ու կայծկլտացող . . . 130
ՄԱՅՐԸ . . . 132
Երազ տեսա՝ Բարձրյալն ինձ ժպտալով ասաց . . . 135
ՄՈՐ ՍԻՐՏԸ . . . 136

## ՄԻ ԳԱՎԱԹՈՎ ԽՐԱԽՃԱՆՔ

Հայելին ինձ ասաց, թե քո նմանակն եմ, հայրի՛կ . . . 140
Տարիներ են անցել... . . . 141
Երազ տեսա, թե վերստին մանուկ . . . 142
Ես գիտեմ՝ ի՛նչ արժե հանդիպման համբույրը . . . 143
ՄԻ ԳԱՎԱԹՈՎ ԽՐԱԽՃԱՆՔ . . . 144
Սրտագիրդ, հայրի՛կ, ձեռքիս մեջ եմ առել . . . 146
Հաճախ մտքիս մեջ անհուն գորովով . . . 147
Փակ–փակ աչքերով, բաց ու բորբ սրտով . . . 148
Ազնի՛վս, թա՛նկս, անտեղիտալիս . . . 149
ՎԱԹՍՈՒՆ ՏԱՐԻ ՄԻԱՍԻՆ ԼԻՆԵԼՈՒ ԱՐՎԵՍՏԸ . . . 150

## ՄԻ ԿՅԱՆՔԸ ՔԻՉ Է...

ՋԱՎԱԿՆԵՐԻՍ . . . 154
Որդուս՝ Բագրատին . . . 155
Որդուս՝ Նարեկին . . . 156
Աշնան արևի շողով ողողված . . . 157
Ասել է, թե զորավոր է աղոթքը մոր . . . 158
Հիմա ես պիտի գետին հակառակ . . . 160
–Պատմիր ինձ, մայրի՛կ, Արաքոյի ձիու . . . 162
Գիտեմ՝ մի օր պիտի ոտքդ անինձ դնես . . . 163
Ինքդ սուրձ չես խմում, ինձ էլ նախատում ես . . . 164
Դու իմն ես, ի՛մը, ամենաիմը . . . 165
Ասում էի . . . 166
Երազ տեսա՝ որդի՛ս, մենակ էիր դու . . . 168
ՈՐԴՈՒՍ . . . 169
Ես Մարիամ չեմ, չէ՛, բայց դու ինձ համար . . . 170

ԳՈՀԱՐ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

# ՔԱՆԻ ՈՒՇ ՉԷ, ԱՍԵՄ

ГОАР ЕГИАЗАРЯН

# ПОКА НЕ ПОЗДНО, СКАЖУ...


Հրատ. տնօրեն՝ Արմինե Քոչարյան
Խմբագիր՝ Ռոզա Հովհաննիսյան
Հրատ. խմբագիր՝ Արմեն Ավանեսյան
Սրբագրիչ՝ Գայանե Եղիազարյան
Ձևավորումը՝ Արմավ հրատարակչության

*Չափը՝ 60x84 1/16*
*Թուղթը՝ օֆսեթ 80 գ/մ$^2$*
*Ծավալը՝ 11.0 տպ. մամուլ*
*Տպաքանակը՝ 300*
*Տառատեսակը՝ Ghabuzian Gohar*
*Գինը՝ պայմանագրային*

издательство **АРМАВ**

Ք. Երևան, Շիրազի 24 շ. 48 բն.    Г. Ереван, ул. Шираза 24 д. 48 кв.
հեռ.՝ 099 37-31-30    тел.՝ +374-99-37-31-30
էլ.փոստ՝ armav-hrat@mail.ru    Email: armav-hrat@mail.ru